№ 16 Փետրվարի 5 (17) **1880** Փետրվարի 5 (17) № 16

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

„ՄՇԱԿ“
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
1880 թվին

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ԱՄԵՆ ՕՐ, բացի տօն և տօների հետևեալ օրերից։

Լրագրի դիրքը և պրոգրամման նոյն են մնում։ Մենք ստանում ենք ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ «ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլ է, կէս տարվան 6 ռուբլ։ Գրվել կարելի է ՄԻԱՅՆ ԽՄԲԱԳՐԱՏՆ ՄԷՋ։

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐՆԵՐԸ ծախվում են 5 կոպէկով հատը։

Օտար քաղաքներից պէտք է դիմել հետևեալ հասցէով ТИФЛИСЪ Редакція «Мшакъ.

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայի դատողութիւնը։—Ներքին տեսութիւն։ Պ. Աւալեանի բենեֆիսը։ Նեղքին լուրեր։—Խառն լուրեր։— Յայտարարութիւններ։— Բանասիրական։ Մի կնոջ պատմութիւնը։

ՀԱՅԻ ԴԱՏՈՂՈՒԹԻՒՆԸ

—

Հային յատկանիշ է հետևեալ դատողութիւնը։ Երբ մի լրագրող, մի հրապարակախօս, մի հասարակական գործող պարսաւում, պախարակում է մի որ և է հասարակական տգեղ կամ վնասակար երևոյթ, — իսկոյն գտնվում են մարդիկ հայերի մէջ որոնք նրան ասում են՝ իսկ դու ինքդ ինչ ես անում, եթէ ուրիշներին պախարակում ես, ինքդ աւելի լաւ արա, աւելի շատ գործիր....

Երևակայեցէք ձեզ որ մի որ և է Նեկրասով կրիտիկական բանաստեղծութիւններ է գրում և մենք, փոխանակ նրա գրուածների օգուտն ըմբռնելու, փոխանակ գը-նահատելու այն բարերար ազդեցութիւնը որ այդ հեղինակն ունի հասարակութեան վրա, ասէինք նրան՝ իսկ դու ինքդ ի՞նչ տեսակ մարդ ես, կարելի է դուն էլ հասարակութեան մնացած անդամների պէս պակասութիւններով լի ես.... Ինքդ քեզ ուղղիր, յետոյ ուրիշների վրա գրիր....

Այդպէս է հայի դատողութիւնը։

Եւ այդ ձևով դատում է ոչ թէ միայն ռամիկ, անգրագէտ, տգէտ հայը, բայց նոյն դատողութեան ձևին հետևում է և հայոց լրագրութիւնը և այդպիսով փոխանակ խելացի կերպով առաջնորդելու հասարակական կարծիքը, միայն մոլորեցնում է նրան....

Մի հայ հրապարակախօս ասում է, դիցուք, որ եթէ բոլգարները և թիւրքիահպատակ քրիստոնեայ այլ ազգութիւնները անձնապաշտպանութեան միջոցով ստացան թիւրքաց կառավարութենից իրանց մարդկային իրաւունքները, ուրեմն թիւրքիացի հայն էլ չը պէտք է լուռ մնայ, չը պէտք է համբերի ամեն տեսակ անիրաւութիւններ, այլ նոյնպէս պէտք է սովորի իր անձը ու իր պատիւը պաշտպանելու,—իսկոյն գտնվում է մի հայ լրագիր որ պատասխանում է՝ եթէ ուրիշներին այդ տեսակ բաներ ես քարոզում, ուրեմն ինքդ ձի նատի՛ր ու գնա, պաշտպանի՛ր թիւրքաց հայերին....

Նախ՝ կարելի է ես ընդունակ եմ՝ միայն մտքեր, գաղափարներ յայտնելու, հասարակական կարծիքը առաջնորդելու և ընդունակ չեմ գործելու. գուցէ ես միայն մի

ՄԻ ԿՆՈՋ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՎԷՊ ԺՕՐԺ ԳՐԱՆԴԻ

—

I

—Ի՞նչ էք անում, Լուիզա, ինչի՞ էք ի զուր այդ յիմար բանով ձեզ համար նոր անբաւականութիւն պատրաստում. ես կարծեմ դուք առանց այդ էլ անբաւականութիւնների մէջ պակասութիւն չունէք։

Կինը, որին դիմում էին այս խօսքերով, իր գոգնոցով աշխատում էր ծածկել ձեռքում բռնած մի շարժուն առարկայ և պատասխանեց։

—Սա մի այնպիսի փոքրիկ արարած է, որ սրբան շատ քիչ տեղ է հարկաւոր։

—Բայց Ցուրնիէին մոռանում էք, իմ խեղճիկ Լուիզա. այդ բանի համար ձեզ կը հանի։

—Ի՞նչ էք ասում, պատասխանեց Լուիզան սիրտ առած, Ժանը բոլորովին այնքան վատ մարդ չէ, ինչպէս դուք կարծում էք։

—Իսկապէս այդ ձեր գործն է, փնթփնթաց հարեան կինը ուսերը վեր քաշելով,—ինչ ասել կուզէ, նա շատ մեղմ մարդ է....

Լուիզան բան չը պատասխանեց։ Նա բարձրանում էր սանդուղքներով դէպի վեցերորդ յարկը։ Հասնելով իր սենեակը, նա բաց արաւ իր գոգնոցը և դրեց յատակի վրա մի փոքրիկ, դեռ ևս կոյր կատու, որ պատահմամբ իր եղբայրների ու քոյրերի դառն վիճակից ազատվել էր։ Իսկոյն երևում էր որ փոքրիկ տգեղ կենդանին, Փարիզի այդ ղաւակը, ծնված է Փարիզի փողոցի աղբերի կուտակների վրա։

—Խեղճիկս, ասում էր Լուիզան, լցնելով ամանի մէջ կաթի մնացորդը և կաթիլ առ կաթիլ ածելով կատուի բերանը այդ մնդարար հիւթը։ Ի՞նչքան զուարճութիւն կը լինի ինձ համար, երբ դա կը մեծանայ, մտածում էր խեղճ կինը։ Եւ նա իր կարանելուց սևացած, կոչտացած մատներով փայփայում էր փոքրիկ կատուի վարդագոյն դունչը։

Ցանկարծ վեր թռաւ նա իր տեղից, փաթաթեց փոքրիկ կենդանուն իր գոգնոցի մէջ, պահեց ամուր ետը ու շտապով դրեց ամանը մնացած կաթով պահարանի մէջ։

Սանդուղքներից լսվում էին տղամարդու քայլուածքի ձայներ։

Լուիզայի հարևան կինը ի զուր չէր ասում Ժանի բարկացողութեան մասին։ Մարդը տուն մտնելուն պէս, Լուիզան դունատափվեցաւ։

—Սատանան տանի այս տեսակ անտանելի եղանակը, ասաց Ժանը թափ տալով անձրևից թաց եղած գլխարկը։

Լուիզան սովոր էր միշտ իր մարդուց միայն հայհոյանքներ ու յանդիմանութիւններ լսել, այդ պատճառով նա լուռ ու մունջ դրեց ճաշելու համար պատրաստ սեղանի վրա մի չիշ գինի ու գինու բաժակ։

—Միշտ և միշտ մի և նոյն բանը, մխ ու կարտոֆել, փնթփնթաց Ժանը բարկանալով. ահա սա արդէն շաբաթվայ մէջ երրորդ անգամն է.... Մթթէ չես կարող ինձ համար մի ուրիշ բան պատրաստել, չէ՞ որ մեր հանդէպ գինեվաճառանոցում ծախվում է և հորթի միս....

—Ի հարկէ, պատասխանեց ցած ձայնով Լուիզան, մսը վառելով, բայց այդ միսը աւելի թանգ արժէ, Ժան։

—Թանգ ու թանգ, քեզանից միշտ այդ եմ լսում։ Երբ մարդը բանում է, նրան հարկաւոր է և կերակուր. հաց ու պանիրը ջրի հետ լաւ է ձեզպէսների՝ կանանց համար, որոնք բացի կարից ուրիշ բան չեն շինում։ Բայց երբ մարդը առաւօտից մինչև երեկոյ ծանր աշխատանքի մէջն է,—դա բաւական չէ։

—Դու ամեն օր, խօ չես աշխատում առաւօտից մինչև երեկոյ, Ժան, նկատեց նրան կինը աւելի հանգիստ ու հաստատ ձայնով, ճաշելու ունես ոչ թէ միայն հաց ու պանիր.... Ես է, ասեց նա, տեսնելով պատի վրա կախ արած փոքրիկ հայելու մէջ իր գունատափ, մաչված դէմքը, զբաղված չեմ միայն կարով.—գիտես թէ ինչպէս անտանելի երկար են թվում ինձ համար օրերը, ուր մնաց գիշերները....

—Խնդրեմ, թող քո անվերջանալի գանգատները, ասեց Ցուրնիէն կոպիտ ձայնով. քո դրութիւնը ուրիշ կանանց դրութենից վատ չէ։

Տիրեց լռութիւնը։

—Կա՛յ կաֆէ, հարցրեց Ժանը, վերջացնելով իր ճաշը։

Լուիզան դողաց։

—Ոչ, փողը պակասեց. վաղը, գիտես, ես փող կը ստանամ կարած շապիկների համար։

Խօսք չունիմ ասելու, լաւ ճաշ է, բացականչեց բանւորը հեգնական ձևով, մէկ բան էլ չունեմ թէ խմեմ.... Սա՛ էլ կեանք է....

Նա մոմը մօտացրեց, չիբուխը կպցրեց, բաց արաւ լրագիրը ու սկսեց կարդալ անբաւական դէմքով։

Լուիզան կրկին վերադարձաւ դէպի իր կարը։

—Այն ինչ է այնտեղ շարժվում, յանկարծ հարցրեց Ցուրնիէն, գլուխը այն կողմը թեքելով։

Մի ինչ որ անորոշ թոյլ ձայն էր լսվում սենեակի մի անկիւնից։

—Զը գիտեմ, մռմռաց Լուիզան, ոչինչ բան չը կայ։

—Կարծես թէ կատու լինի, կրկնեց բանւորը։

—Կատո՞ւ.... Գուցէ և կատու է, կատուի վրա է վաղում, պատասխանեց կինը, դողալով ամբողջ մարմնով։

Նոյն րոպէին աթոռի տակից դուրս գլորվեցաւ մի ինչ որ բան գոգնոցի մէջ փաթաթված։

Լուիզան կամենում էր մօտ վազել, բայց ուշ էր արդէն։ Գոգնոցի միջից դուրս էին նայում խեղճուկ փոքրիկ կատուի գլուխը, մէջքը ու պոչը։

—Այդ որտեղից է ընկել այս գարշելին, բղավեց զայրացած ձայնով Ցուրնիէն, իսկոյն գցիր աղբանոցը, հրամայեց նա։

—Ես քեզ այս րոպէիս կը բացատրեմ, Ժան, ասեց Լուիզան մօտենալով իր մարդուն արուեստական ժպիտը երեսին,—ես սրան գտայ փողոցում. միւս փոքրիկ կատուներին խեղդեցին, իսկ ես սրան վեր առնելով մտածեցի որ իմ մենակութեան մէջ նա կարող է ինձ զուարճացնել։ Ես համոզված էի, Ժան, որ դու թոյլ կը տաս ինձ այդ անմեղ զուարճութիւնը։

Բանւորը չիբուխը յետ գցելով մի կողմ, մի այնպիսի սարսափելի հայեացք գցեց կնոջ վրա, որ սրա շունչը վախից կտրվեց։

—Մի բարկացիր, սկսեց նա կակազելով, ես....

—Կատո՞ւ.... Ամօթ քեզ.... Խաղալիկ քո պարապմունքի համար, յիմար պառաւ, գոռաց Ցուրնիէն, օգուտ քաղելով այս դէպքից իր ամբողջ բարկութիւնը կնոջ գլխին թափելու։ Դու ինձ ամեն բանից զրկում ես, ինձ ոչինչ չես տալիս, ոչ կաֆէ, ոչ օղի, հաւատացնելով որ փող չունես, իսկ քո զուարճութեան համար կամենում ես կատուներ պահել.... Այդպէս, ուրեմն, դու իմ բերանից կը կարես վերջին թիքէն այդ գարշելի կենդանուն կերակրելու համար.... Եւ ո՞վ գիտէ, գուցէ արել էլ ես արդէն....

Այս խօսքերից յետոյ, վրա ընկնելով պահարանին, նա դռները բաց արաւ և առաջինը ինչ որ իր աչքին ընկաւ՝ կաթի մնացորդով ամանն էր։

—Առ քեզ, գոռաց նա, և շպրտեց ամանը կնոջ երեսին, որը թէպէտ այդ րոպէին գլուխը ցած էր արել, բայց դարձեալ ամանի կտորները դիպչելով նրա դէմքին, վիրաւորեցին նրա թուշը.—ահա այս էլ քո կատուին....

Կատաղութենից իրան մոռացած, նա չորս ծայրերից բռնեց գոգնոցը, որի մէջ պահված էր փոքրիկ կենդանին և ինչքան ոյժ ունէր խփեց քարէ յատակին։

Լսվեցան մի քանի սրտաճմլիկ ճղաւոցներ և յետոյ ամեն բան հանգստացաւ։

—Լաւ է հիմայ քո խաղալիկը, ասաց Ցուրնիէն ծիծաղելով ու մի կողմ գցեց արիւնաշաղախ գոգնոցը։ Դէհ, դաղարիր հեկեկալուց, եթէ ոչ քեզ հետ էլ նոյնը կը պատահի, ասեց Ժանը, ոտքով յետ խփելով սպանված կատուն։

Նա վառեց իր չիբուխը ու նորից շարունակեց

առողջ գլուխ ունեմ, իսկ ոտներ ու ձեռներ բոլորովին չունեմ. երկրորդ՝ չէ կարելի մտքեր յայտնողից պահանջել որ նա իր յայտնած մտքերը անպատճառ իրագործի.... Աշխատանքի բաժանութիւնը նոյն իսկ դրա մէջն է....

Ուրիշ օրինակ։ Դիցուք ես ասում եմ թէ հին ուսանողների մի 70 հոգի գումարվելով և ճաշելով, հաւաքեցին իրանց մէջ 700 ռուբլ այժմեան ուսանողներին օգնելու համար, իսկ իրանք էլ նոյնքան գումար ծախսեցին իրանց փորի վրա, ուրեմն աւելի լաւ կը լինէր այն ամբողջ 1400 ռուբլ գումարն ուղարկէին ուսանողներին, իսկ իրանք նոյն օրը բաւականանային իրանց սովորական տնային ճաշով, —իսկոյն կը գտնվի մէկը, որ ինձ կը պատասխանի՝ իսկ դու ի՞նչի նոյնքան չը տուեցիր....

Նախ՝ շատ կարելի է, կը պատասխանեմ ես, որ ես նոյն նպատակին ամեն տարի աւելի մեծ գումար էլ եմ տալիս, միայն թէ աղմուկ չեմ գցում այդ մասին զանազան ճաշաբանութեամբ և ճառաբանութեամբ, երկրորդ՝ շատ կարելի է որ ոչինչ էլ չեմ տալիս, որովհետև իմ բոլոր միջոցները գնում են ուրիշ, նոյնքան անհրաժեշտ հասարակաօգուտ ծախսերի վրա....

Մինը տարեկան 500 ռուբլ

ծախսում է մի դպրոց պահպանելու համար, երկրորդը տարեկան 2000 ռուբլ իր գրպանից է տալիս մի լրագրի դէֆիցիտ ծածկելու համար, իսկ երրորդը, որ երկու առաջիններից գուցէ աւելի միջոցներ էլ ունի, ամբողջ աշխարհի մէջ դղրդոց է գցում որ տարին մի անգամ 10 ռուբլ իր փորի հաճոյքին է տալիս, 10 ռուբլն էլ չքաւոր ուսանողներին է նուիրում...

Բայց ասենք, մինչև անգամ, որ հրապարակախօսը, գրողը, բանաստեղծը, կրիտիկոսը իրանք ժլատ, անպիտան մարդիկ են,—բայց մի՞թէ նրանց յայտնած արդար, խելացի և օգտակար մտքերը, դադարում են արդար, խելացի կամ օգտակար լինելուց միայն այն պատճառով, որ այդ մտքերի յայտնողները իրանք այս կամ այն խոշոր պակասութիւն ունեն....

Դիցուք մի լրագրող, մի հրապարակախօս փաստերի և անհերքելի դատողութիւնների վրա հիմնվելով, խստութեամբ և անխնայ կերպով քննադատում է իր հայրենակիցների ուսման սխալթեմը, քննադատում է դպրոցական ամբողջ կազմակերպութիւնը, ցոյց է տալիս իր ազգի մէջ եղած ուսումնարանների պակասութիւնը, նրանց սխալ ու վնասակար ուղղութիւնը....Յանկարծ մի այլ լրագիր պատասխանում է նրան՝ եթէ այդպէս է, ինքդ հիմիր մի օրինակելի դպրոց, տեսնենք թէ դու ինչպէս կը կառավարես նրան....

Բայց եթէ նա փոխանակ լրագիր հրատարակելու, փոխանակ գրող կամ լրագրապետ լինելու, դպրոց հիմնէր,—նա կը լինէր մանկավարժ, և չէր լինի լրագրող. բայց քանի որ նա լրագրապետ է, նա պէտք է ամենօրեայ հասարակական բոլոր հարցերին ուղղութիւն տայ, առաջնորդէ հասարակական կարծիքը։

Եւ ճշմարիտ ո՞ւր կը տանէր մեզ այդ տեսակ դատողութիւն հասարակական բոլոր երևոյթների, բոլոր հարցերի վերաբերութեամբ.... Հէնց որ մի լրագիր մի խնդիր յարուցանէր, իսկոյն կը գտնվէին մարդիկ, որոնք կասէին նրան՝ «դու այդ բանը վատ, անբաւականացուցիչ ես գտնում,—ուրեմն ինքդ աւելի լաւն արա....»

Այդպիսով անկարելի կը լինէր ոչինչ միտք յայտնել, ոչինչ խնդիր յարուցանել, ոչինչ պակասութիւն ցոյց տալ, որովհետև բոլորի վրա դուք պատասխան կը ստանայիք, —ուրեմն ինքդ արա, ինքդ շինիր....

Հայերի դպրոցները վատ են, ասում է՞ք դուք,—ինքդ դպրոց հիմնիր, պատասխանում է հայը. հայը չէ սիրում ընթերցանութիւն և խնայում է դրա վրա մի ռուբլ

Միամիտները չեն մտածում որ այդպիսով չափից դուրս մեծ նշանակութիւն են տալիս մի մար-

իր լրագրի ընթերցանութիւնը, իբր թէ ոչինչ չէր պատահել։

Լուիզան երեսից սրբեց արիւնը ու լուռ նըստեց կարի։

Ծանր սրտով ու մտածմունքներով այդ թշուառ կինը շարունակում էր իր կարը։

Բանտորը կարդում, յօրանջում, քթի տակ փնթփնթացնում էր հայհոյանքներ, անդադար բռունցքով խփում էր սեղանի վրա, զգալ տալու համար թէ որքան նեղացած է կնոջ վրա։ Վերջապէս հանվեցաւ ու պառկեց քնելու։ Նա քնեց հանգիստ քնով դէմքը դարձրած դէպի իր կինը։ Եւ չը նայելով որ նա քնած էր, նրա դէմքը դարձեալ պահպանել էր ժանգոտ, բարկացկոտ արտայայտութիւն։ Քունն էլ չէր մեղմացրել նրա դաժան դէմքը։

Ինն ժամ էր, թէպէտ այդպէս ուշ էր, բայց Լուիզան դեռ չէր մտել անկողին։ Նա յետ դրեց իր կարը ու լսում էր ինչպէս անձրևի կաթիլները խփում էին պատուհանի ապակիներին։ Նրա հայեացքը ուղղված էր դէպի իր քնած մարդու դէմքը, թէև անշարժ նստած նրա գունատ երեսի վրա յայտնվող ժպիտը ցոյց էր տալիս թէ նրա գլխով այն բոպէին անցնում էին շատ ու շատ մտքեր։ Հարբեցողութենից ու անբարոյական կեանքից այլանդակված այդ դէմքը դարձեալ յիշեցնում էր նորան այն մարդուն, որին նա մի ժամանակ այնքան սիրում էր, յիշեցնում էր նրա երիտասարդ հասակի գեղեցկութիւնը։

Ժան Տուրնիէի կինը նրա հարազատ կինը չէր. դրանք կապված էին այն կապերով, որոնք կապում են շատ անգամ սէրը, օրինացնում են անբարոյականութիւնը և սրբացնում են մարտիրոսական պսակը։

Այժմ Լուիզան երեսուն տարեկան է։ Երբ նա տասն և ութ տարեկան թարմ, վարդագոյն թշերով, սև, փայլուն աչքերով և գեղեցիկ խարտեաշ մազերով աղջիկ էր,—նա օրավարձով աշխատում էր ընտանիքներում։ Ծնողներին նա չէր յիշում։ Այն ընտանիքում, ուր նա չաբաթը մի անգամ գնում էր աշխատելու, մի անգամ հարկաւորվեցաւ

փականագործ։ Կանչված փականագործը մի գեղեցիկ, կապոյտ աչքերով, չէկ գանգուրներով երիտասարդ տղայ էր։

Ծանօթանալով Լուիզայի հետ, նրանք միմեանց մէջ խօսեցին և երբ Լուիզան կամենում էր տուն վերադառնալ, երիտասարդը ուղեկցեց նրան դէպի տուն։ Սրանից յետոյ այցելեց նրան մի երկու անգամ և վերջապէս նամակով հրաւիրեց իր հետ գնալ քաղաքից դուրս զբօսնելու։ Լուիզան սիրեց նրան և անձնատուր եղաւ։ Քաղաքակրթեալ կանանց մեծ մասի աչքում ի հարկէ նա յանցաւոր կը համարվէր, այն կանանց, որոնք առանց կարմրելու ծածուկ խաբում են ու անհաւատարիմ են լինում իրանց ամուսիններին։ Լուիզան չէր ամաչում իր սիրոյ զգացմունքից, այդ սէրը սրբացնում էր նրա բարոյական անկումն։ Նա տուեց իր սիրած մարդուն, իր Ժանին, իր սիրելի ամուսնուն իր ամբողջ կեանքը, նա յանձնեց նրան իր պատիւը, իր ներկայ ու ապագայ կեանքը, նա տուեց նրան այն ամենը, ինչ որ կինը սիրելով զոհ է բերում։ Նա իր Ժանին համարում էր ամենագեղեցիկ, ամենախելք, ամենաուրախ զուարճախօս և չէր նկատում նրա պակասութիւնները,—նրա ծուլութիւնը և խստասիրտ եսականութիւնը։

Տուրնիէն քնած էր առաջվայ պէս։ Կինը շարունակ նայում էր մարդու վրա, բայց այդ հայեացքը այլ ևս սէր չէր խոստանում. նա լի էր ատելութեամբ։ Նրա գլխում խառն կերպով յարուցվում էին դառն մտքեր, նա յիշեց իր մարդու իրան առաջին անգամ ասած սուտ խօսքը, յիշեց այն գիշերը, երբ մարդը առաջին անգամ տանից դուրսն էր անցկացրել։ Նրա յիշողութեան մէջ զարթեց արբեցողութենից այլանդակված Ժանի դէմքը... Ինչքան դառն արտասուքներ, ինչքան ապարդիւն ջանքեր գործ էր դրել խեղճ կինը իր մարդու կորած սէրը նորոգելու համար, որ եթէ մի անգամ կորչում է, էլ երբէք չէ վերադառնում։

Դարձեալ մի քանի բոպէ ու Լուիզան դադարեց նայել մարդու վրա։ Նրա աչքերում էլ արտասունքի նշոյլ չէր երևում. այժմ նա դէպի այդ մարդը միայն ահ ու զզուանք էր զգում.... Ցիչում է նրա ծեծը, հայհոյանքները, կոտրած կահկարասիքը, իր ստրկացած դրութիւնը—բոլոր այն տանջանքները, որոնց կրել է այն օրից սկսած, երբ Ժանը սկսեց հարբեցողութիւնից ծուլանալ և անբարոյականութեան մէջ ընկնել։

Թշուառ կնոջ ձեռքերը կապտացած էին, մէջքը շատ աշխատելուց կռացել էր, իսկ մի ժամանակ մարգարիտների պէս սպիտակ, փայլուն ատամները մարդու բռունցքի հարուածներից կոտրված էին։

Այդ մտածմունքների ներգործութեան տակ, նա այլայլվում է, նրա ինքնասիրութիւնը վիրաված է, բայց նա դարձեալ տատանում է.... Յանկարծ նրա հայեացքը ընկնում է դեռնի վրա փռված գոգնոցին, որի միջից դուրս էր նայում կատուիկի ջարդված գլուխը,—իր խաղալիկը, ինչպէս ծաղրելով ասում էր մարդը, որը այդ բոպէին քնի մէջ արտասանում էր անորոշ հայհոյանքներ ու շուռ գալով դէպի պատը նորից խրմփեց։

Ի՞նչ օտարոտի փոփոխութիւն յանկարծակի կատարվեցաւ կնոջ ուղեղի և սրտի մէջ.... Լուիզան այլ ևս չէ լալիս, չէ յուսահատվում ու չէ տատանվում, կարծես մի անգամից պարզվեց նրան իր դրութիւնը։ Նա նայում է պատուհանից, արդէն լուսանում է. կամաց կամաց նա բաց է անում պահարանը, հանում է իր աղքատ շորերի պաշարը ու բոլորը կապում է կապոցի մէջ, գաղտնի մի պահարանից էլ հանում է չորս հատ ոսկի, որոնցից երկուսը դնում է սեղանի ամենաաչքի ընկնող տեղի վրա, իսկ մնացած երկուսը զցում է իր գրպանը։ Յետոյ վեր է առնում իր կապոցը ու դուրս է գնում սենեակից։

Առաւօտեան ժամի վեցն էր։ Ժան Տուրնիէն դեռ ևս խոր քնի մէջ էր։

—Դուք արդէն գնում էք աշխատելու, հարցրեց Լուիզային հարևան կինը, հանդիպելով նրան սանդուղքների վրա։

—Այո։

—Իսկ ձեր մարդը բան չասեց կատուի մասին։

—Ոչինչ, պատասխանեց ցած ձայնով Լուիզան։

—Շատ ուրախ եմ....

II

Այն օրից անցաւ երեք ամիս։ Լուիզան նորից աշխատում է մագազինում. նա այժմ էլ այնքան թոյլ և գունատ չէ։ Եթէ նրան երկու ատամներ պակասելիս չը լինէին, նա դարձեալ շատ գեղեցիկ կը լինէր։ Այժմ նա ընակվում է մի բարի կնոջ մօտ, որ նրա մասին մայրական հոգս է տանում։

Մի անգամ խանութ գնալիս աշխատելու համար, նա նկատեց որ նրան ոքմին դրան առջև սպասում էր. այդ մարդը Ժան Տուրնիէն էր։ Լուիզան կամենում էր լռութեամբ մօտով անցնել, բայց Տուրնիէն ձեռքը դնելով նրա ուսին, կանգնեցրեց նրան։

—Ես եկայ քո ետևից, Լուիզա, ասեց նա հաղիւ լսելի ձայնով, մենք միասին այնչափ երկար ենք ապրել, որ դա յիմարութիւն կը լինէր այդպէս հեշտ միմեանցից բաժանվել։ Ես, իրաւ, շատ խիստ ու պահանջող էի դէպի քեզ, բայց այժմ ես ուղղվել եմ. մենք միմեանց սովոր ենք, ուրեմն արի, գնանք։

Լուիզան հանդիստ դէմքով նայեց մարդու վրա։

—Ոչ, ես քեզ մօտ չեմ գայ, պատասխանեց նա անվրդով ձայնով։

—Եւ դու այդպէս վարվում ես ինձ հետ մի անպիտան կատուի պատճառով։

—Ոչ, պատասխանեց կինը, այլ տաներկու տարվայ ընթացքում իմ կրած տանջանքներիս համար։

Տուրնիէն վերադարձաւ տուն, այս անգամ ոչ հարբած և հարևանները պատմում էին որ գիշերով նրա սենեակից լսվում էին լացի ձայներ։

Այդ դէպքից յետոյ Ժան Տուրնիէն էլ երբէք չը պատահեցաւ իր կնոջ հետ։

Մ.

դուն, որովհետև ամեն բան մի մարդուց են պահանջում.... Համ պէտք է գրես, համ պէտք է գործես, համ պէտք է նիւթական միջոցներդ զոհես, համ վերջապէս ինքդ պէտք է այն ամենն անես, որ ուրիշներին ետքարոզում և ուրիշները չեն անում,—իսկ մենք կարող ենք ձեռքերը ծալած անգործ նստել....

Ուրիշ բան է պահանջել ինքնագործութիւն ամբողջ հասարակութիւնից, ուրիշ բան է ամեն տեսակ գործ մի մարդուց պահանջել, և այնպիսի մարդուց, որ միմիայն դրիչ ունի ձեռքում:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Պ. ԱԻԱԼԵԱՆՑԻ ԲԵՆԵՖԻՍԸ

—

«Մայրասպան», դրամա 5 արարուածներով և 7 պատկերներով, թարգ. պ. Աւալեանցի, ահա այն գրուածքը, որ հայ դերասանական մշտական խումբը յունվարի 31-ին ներկայացրեց յօգուտ պ. Աւալեանցի:

Պիեսան բաժանված է հետևեալ 7 պատկերների վրա. Զարհուրելի գիշեր, Ապացոյցներ և բանտարկում, Սեղանաւորի հիւրընկալուն, Ոստիկանութեան վարչատունը, Լաբախաղների թէատրոն (ցիրկ), Սրճատուն երգեցողութեամբ և Բռնի գողութիւն: Աւելորդ չէ պատմել պիեսայի բովանդակութիւնը:

Տիկին Դալիսէի այրի կինը, որի ամուսինը փախել է Իտալիա, չարագործ է դարձել և վերջին տարիների ընթացքում բոլորովին անհետացել է, գրաւ է դնում իր կայքը, որովհետև իր որդի Լօրանը նրանից 10,000 ֆր. է խնդրել իր պարտքերը տալու համար: Տիկինը 10,000 ֆր. ստանում է իր փաստաբան Գլաւօնից, որ փողի հետ տիկնոջը խորհուրդ է տալիս այդ փողերը իր որդուն չը տալ: Տիկինը հետևում է փաստաբանի խորհուրդին: Այդ պատկերի կատարվելու ժամանակ տիկնոջ տանն է մի կար անող աղջիկ, Անետա, Լօրանի սիրուհին: Երբ Լօրան գալիս է մոր մօտ, պատահում է իր Անետային և երկուսի մէջ մի խօսակցութիւն է լինում, որի ժամանակ Անիետան յայտնում է, թէ ինքը Լօրանից խաբված է, թէ Լօրանը սիրում է Անրի Սուշան սեղանաւորի Վիրգինիա աղջկան, կամենում է նրա հետ ամուսնանալ, իսկ իրան թողնել և այլն: Երիտասարդը հեշտութեամբ հանգստացնում է շփոթված գեղեցիկ կնոջը և տեսնվում է իր մոր հետ: Մայրը յայտնում է որդուն, որ այդ 10,000 ֆր. գումարը իր վերջին ունեցածն է, եթէ այդ փողերը Լօրան տանէ և իր պարտքերը տայ, գուցէ ինքը սպիպված կը լինի աղքատութիւն անել: Լօրանը չէ կամենում իր մօրը հասցնել այդ դրութեանը և չը վերցնելով փողը, գնում է իր տուն. մայր և որդի ջոկ ջոկ տներումն են բնակվում: Գիշեր է. ամենքը քնած են: Լօրանի մոր սենեակից աղաղակներ են լսվում, մայրը օգնութիւն է կանչում, Անիետան վազում է այնտեղ, վիրաւորված դուրս է գալիս սենեակից և յայտնում է, որ Լօրանը իր մօրը սպանեց: Սա զարհուրելի գիշերն է:

Միւս օրը Անիետան, չը նկատելով ոստիկանութեան ներկայութիւնը, պատմում է իրողութիւնը: Գտնում են Լօրանի արիւնաշաղախ սուրը, նրա կօշիկների հետքերը այգիում և նրան կալանաւորում են: Դա էլ ապացոյցները և բանտարկումն է:

Սեղանաւոր Սուշանի տանը հիւրեր կան: Բոլորն էլ Լօրանի գործի մասին են խօսում. «Մեղու Հայաստանի» լրագրի չորրորդ երեսի վրա կարդում են պրոկուրորի և պաշտպան փաստաբանի ճառերը: Դատարանում Լօրանի գործը շարունակվում է: Նա ազատվում է, որովհետև Անիետան իր ասածները դատարանում մերժում է: Լօրանը հիւր է գալիս Սուշանի տուն, բայց ամենքը նրանից յետ են քաշվում. դատարանը նրան արդարացրեց, բայց հարկաւոր է, որ հասարակական կարծիքն էլ նրան արդարացնէ: Լօրան խօսք է տալիս Վիրգինիային, որ իրան սիրում է, գտնել իր մոր սպանողներին և այդպիսով արդարանալ հասարակական կարծիքի առաջ:

Նա գնում է ոստիկանութեան վարչատուն, խնդրում է կառավարչից իրան ոստիկանութեան մէջ ծառայութեան ընդունել: Կառավարիչը առաջ նրա խնդիրքը մերժում է, իսկ յետոյ տեղեկանալով, որ Փարիզ նոր ցիրկ է եկել և ցիրկի կառավարիչները յայտնի աւազակներ՝ Դակօլար և Լիւբէն են, ընդունում է Լօրանին ոստիկանութեան ծառայութեան մէջ: Մենք չը հասկացանք ընդունելութեան պատճառը արդեօք Լօրանի չարագործութեան մէջ համոզվելու համար էր, թէ ոստիկանութեան կառավարիչը փոխեց իր համոզմունքը և նորեկ աւազակներին կասկածեց չարագործութեան մէջ:

Հետևեալ պատկերը ցիրկն է ներկայացնում, որտեղ հաւաքվել են ոստիկանութեան անդամները, ի հարկէ հագուստները փոխած: Այդտեղ ոստիկանները տեղեկանում են, որ Դակօլար և Լիւբէն չարագործները մտադիր են Անրի Սուշանի տանը գողութիւն անել, յետոյ մի և նոյն անձինքը, այսինքն ոստիկանները և չարագործները միմեանց սրճատան մէջն են պատահում, որտեղ Անիետան երգում է, տեսնում է Լօրանին և ոստիկանութեան կառավարչի ներկայութեամբ դարձեալ ասում է Լօրանին, որ նա սպանեց իր մորը: Ոստիկանութեան կառավարիչը Անիետային (!) կալանաւորում է:

Հինգերորդ գործողութեան մէջ Դակօլար և Լիւբէն չարագործները մտնում են սեղանաւոր Սուշանի տուն, կոտրում են նրա դրամարկղը, գողանում են արկղի մէջ եղածը և յետոյ վառած մոմը սկսում են կաթեցնելով տանել մինչև Սուշանի որդու սենեակը և բացի այդ արկղի մօտ զցում են Սուշանի որդու ժամացոյցի շղթան, որպէս զի այդ երիտասարդին գողութեան մէջ կասկածեն: Գողերին չէ աջողվում, որովհետև ոստիկանութիւնը նրանց բռնում է: Բայց ինչ եղաւ մայրասպան Լօրանի հետ. ոստիկանութեան կառավարիչը յայտնեց, որ Լօրանը իր մորը չէ սպանել, այլ նրա մոր սպանողները Լիւբէն և Դակօլար չարագործներն էին: Բայց թէ ինչպէս իմացաւ այս բանը ոստիկանութեան կառավարիչը, հասարակութեան համար գաղտնի մնաց: Թէ ինչի էր Մարիեան հաւատացնում, որ Լօրանը մայրասպան է, արդէօք նա սո՞ւտ էր ասում, թէ ճշմարիտ, նոյնպէս գաղտնի մնաց:

Ահա այն դրամայի բովանդակութիւնը, որ կրում է «Մայրասպան» ճռճռող վերնագիր և որ բաժանված է նոյնչափ ճռճռող վերնագիրներ ունեցող պատկերների վրա:

Որ պ. Ադամեան գնում է իր բենեֆիսին «Կոյրի» նման մի absurdum, որ օր. Սիրանուշ «Հարստահարված առաքինութեան» պէս մի յիմարութիւն է տալիս իր բենեֆիսին, այդ մեզ համար հասկանալի է, բայց պ. Աւալեանի վարմունքը մենք չը կարողացանք հասկանալ: Պարոն Աւալեանը այն տեսակ դերասաններից է, որոնց վրա ամեն տեսակ բեռն են շալակում, որոնց իւրաքանչիւր պիեսայի մէջ դուրս են բերում ամենաբազմակողմանի դերերով: Ի հարկէ այդպիսի հանգամանքներում դերասանը կորցնում է իր բոլոր արժանաւորութիւնները, բայց մի և նոյն ժամանակ պ. Աւալեանը ունի մի տեսակ ամպլուա, որի մէջ նա գեղեցիկ է լինում: Մենք խըստութեամբ չէինք վերաբերվում դէպի պ. Աւալեանը, երբ նա իբրև պաշտօնեայ, իբրև թատրօնական մանաժողովի վարձկան դերասան, ստիպված ամեն տեսակ դերերում դուրս էր գալիս, բայց որ նա իր բենեֆիսին այն տեսակ պիեսա չը դրեց, որ փոքր ի շատէ միտք ունենար և որի մէջ ինքն էլ կարողանար մի տիպ ներկայացնել, մի այնպիսի տիպ, ինչպէս պ. Սունդուկեանի Արութինը (Պէսօ), Սարգիս (Էլի մէկ զոհ) և այլն, դրա համար պ. Աւալեանը դատապարտելի է: Մանաւանդ որ «Մայրասպան» պիեսան ինքը պ. Աւալեանը թարգմանել է, մանաւանդ որ նա կարող էր թարգմանել մի այնպիսի գրուածք, որ փոքր ի շատէ բովանդակաւոր և խելացի լինէր և որի մէջ պ. Աւալեանն էլ կը կարողանար մի բան անել: Ոթէ ոչ ի՞նչ բան է «Մայրասպանը», ինչ միտք ունի նա, ի՞նչ բարոյական ազդեցութիւն պիտի ունենայ այդ գրուածքը հասարակութեան վրա: «Մայրասպանը» ամբողջապէս գրված է նրա համար, որ ցոյց տայ Փարիզի պոլիցիականների ճարպիկութիւնը, ուրիշ ոչինչ միտք, ոչինչ տենդենցիա չը կայ այդ գրուածքի մէջ: Բացի այդ «Մայրասպանի» մէջ պ. Աւալեանի դերն էլ իրան յարմար չէր և եթէ հասարակութիւնը նրան ծափահարում էր, այդ նրա նախկին ծառայութիւնների համար էր:

Վերջացնելով մեր յօդուածը ցանկութիւն ենք յայտնում, որ պ. Աւալեանը միւս անգամ չը հետևէ այդպիսի սխալ ընթացքի:

Բենեֆիցեանտը մի քանի ընծաներ ստացաւ, որոնցից աւելի շատին նա արժանի էր:

Մենք չենք հասկանում, թէ անտրակտների ժամանակ ի՞նչ աղմուկներ են լինում վարագոյրի ետևը: Գուցէ բեժիսիորը անզգուշութեամբ բեմը կազմելու ժամանակ աղմուկ է հանում, աթոռները այս կողմ այն կողմ դըցելով և բարձր բղաւելով: Լաւ չէ, պ. Բեժիսիոր: Փոքր ինչ զգոյշ եղէք, որպէս զի յանկարծ թատրօնական մանաժողովի ցանկութեան հակառակ իրա կեանքից վերցրած մի պիեսա չը ներկայացնէք:

Որովհետև բեժիսիորի վրա խօսեցինք, աւելորդ չէ նրա անճշդութիւններից մի քանիսը ցոյց տալ:

Բեմը գիշեր է ներկայացնում և ներս են բերում լամպա, դրանից բեմը չէ լուսաւորվում, անցնում են 5 բոպէներ և յետոյ յանկարծ դիւթական զօրութեամբ լուսաւորվում է:

Գողերը լապտերով Սուշանի տուն են մտնում, լապտերի լոյսը այնքան խաւար է որ գողերը ոչինչ չեն տեսնում և տան մոմերը վառում են, բեմը շարունակում է մութ մնալ, բայց գոնէ մոմի լոյսը կայ, մինչդեռ մի քանի բոպէից յետոյ նոյն տունը մտնում են ոստիկանութեան ծառայողները, տանտէրերը ոչ մոմ են վառում և ոչ լապտեր ունեն, բայց միմեանց շատ լաւ են տեսնում և երկար ու բարակ մալահաթներ են անում: Ի՞նպէս պէտք է մեկնել այս հանգամանքը: Այսպիսի շատ անճշդութիւններ կարող էինք պատմել, բայց մեր յօդուածը առանց այդ էլ երկարացաւ:

Լսում ենք, որ պ. Աւալեանը իր բենեֆիսից, որի ժամանակ թատրօնը լի էր, ընդամենը 180 րուբլ է ստացել: Եթէ թատրոնական մանաժողովն էլ այդքան լինի ստացած, ուրեմն բենեֆիսի զուտ եկամուտը 360 րուբլ է եղել: Ամարային թատրօնը, ինչպէս պատմում են, բենեֆիսի գներով 700 րուբլ եկամուտ է տալիս, ուրեմն այդ գիշերը 350 բուբլ ծախս է եղել:

Նոր-Բեցենդենտ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Դոկտոր Անդրէաս Արծրունի գրում է մեզ Բերլինից. «Նորերումս մի հարուստ գերմանացի մինեռալոգ վախճանվեցաւ այստեղ և կտակեց մի գումար (12,000 թալէր) այստեղի Ակադէմիային, որպէս զի այս գումարը օրինաւոր կերպով աճեցնելուց յետոյ, նրա տոկոսներով մինեռալոգիական արշաւանքներ յանձն առնվեն.» Պ. Արծրունու հաղորդված այդ ուրախալի լուրին մենք մեր կողմից կաւելացնենք այն ցանկութիւնը որ գիտնական, մինեռալոգիական արշաւանքների առաջիններից մէկը կատարվի դէպի Փոքր-Ասիան և Հայաստանը, որովհետև այդ երկիրները այժմ ամենքին հետաքրքրում են և դեռ շատ քիչ յայտնի են եւրոպական գիտութեանը:

—

Ստացանք Վենեցիայում Մխիթարեաններից հրատարակված «Բազմավէպ» հանդիսարանի վերջին տետրակը: Ինչպէս և միշտ, այս տետրակի մէջ տիրում է կատարեալ դարդակութիւն և ամբողջ տետրակի մէջ ոչինչ չը կայ կարդալու: Ձենք հասկանում ինչ նշանակութիւն ունի հրատարակել այդ տեսակ անդոյն, անհամ և անճոռնի հանդիսարան: Մխիթարեան միաբանութեան սուրբ հայրերը չեն տեսնում մթթէ որ կատարեալ ապարդիւն աշխատանք են կատարում, կատարելապէս ջուր են մաղում:

—

Փետրվարի 2-ին մի քանի օրվայ գարնանային եղանակից յետոյ, կրկին ձիւն եկաւ Թիֆլիսում: Բայց փողոցներում ձիւնը հալվում էր և միայն ցեխ էր դոյացնում:

—

Մենք իմացանք որ Թիֆլիսի գործակատարներից, քահանաներից և դպրոցների աշակերտներից շատերը դժուարանում են «Մշակին» գրվելով մի անգամից 10 բուբլ վճարել: Այդ պատճառով մենք պատրաստ ենք քաղաքիս դպրոցների աշակերտներին, քահանաներին և պրիկաշչիկներին հեշտացնել «Մշակի» բաժանորդագրութիւնը, հետևեալ պայման առաջարկելով նրանց: Նրանք կարող են գրվել մեր թերթին սկզբից 2 բուբլ վճարելով, և յետոյ մի մի բուբլ տալով, ութ ամսվայ մէջ լրացնել «Մշակի» տարեկան բաժանորդագինը, կամ տաս ամսվայ մէջ վճարել ամսական մի մի բուբլ:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Յունվարի 31-ին կուլօն անուանված կալուածատեղում (Ժիրոնդեան դեպարտամենտում), մեռաւ ջերմից 74 տարեկան հասակում Միրանդի նահանգի պատգամաւոր Ա. Գրանիէ դէ-Կասանեակը, բնապարտեան կուսակցութեան կատաղի անդամ Պոլ դը-Կասանեակի հայրը: Նա ծնվեց Բէրժէրում 1806 թուականին: Նրա ծննդեան տեղը առաջ սխալմամբ Կասանեակն էին հաստատում, որով և բացատրում էին նրա ազգանունի երկրորդ մասը: 1832 թվին նա, Վիկտոր Հիւգոյի բարեխօսութեամբ, առաջ «Journal des Débats»-ի, իսկ յետոյ Փարիզի «Presse» լրագրի աշխատակից դարձաւ, և մեծ աղմուկներ հանեց կլասիցիզմի դէմ ուղղված իր խիստ կրիտիկներով: Գրանիէ դէ-Կասանեակը թէ պատգամաւորների ժողովում և թէ լրագրում ջերմ կերպով պաշտպանում էր, որպէս կաչառված պաշտօնական ժուրնալիստ, զանազան կառավարութիւնների ժամանակ, պահպանողական կուսակցութեան շահերը: Լուի-Նապոլէօնի պետական յեղափոխութեան ժամանակ նա առաջին գրողն եղաւ, որ համարձակութիւն ունեցաւ պաշտպանել և մինչև անգամ փառաբանել դեկտեմբերի 2-ի չարագործութիւնը: Փարիզի լրագրութեան մէջ աշխատողները, այն ժամանակ, երբ նա պաշտօնական խմբագիր էր, անդադար յիշեցնում էին նրան այն «մէկ գիւժին արծաթէ դդալները», որ նա ստացաւ մէկ երգչուհուց, երբ նա ժիրարդինեան «Presse» լրագրի բեցէնզէնտ էր:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 31 յունվարի: Կոմս Լորիս-Մելիքով հասաւ Ս. Պետերբուրգ. այսօր հասան այստեղ Նոյնպէս և Տօտլեբէն ու Մինիստր Նաբոկով. երէկ բուլգարական իշխանը հասաւ Կիեվ. մի քանի օտարերկրեայ իշխաններ մտադրվել էին փետրվարի 19-ին Ս. Պետերբուրգ գալու, բայց Կայսրուհու հիւանդութեան պատճառով փոխեցին գալու օրը: Սաստիկ լուր է տարածվել, որ իբր անգլիական Դուֆֆերին և Լէյարդ դեսպանները փոխվում են և միմեանց տեղն են անցնում:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 31 յունվարի: Պետական բանկի 5% առաջին փոխառութեան տոմսակն արժէ 93 ր. 50 կ., երկրորդ 92 7/8 ր., երրորդ 93 ր. 50 կ., չորրորդ 93 ր. 25 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակն արժէ 228 ր. 50 կ., երկրորդ 228 ր., արևելեան առաջին փոխառութեան տոմսակն արժէ 91 ր., երկրորդ 91 1/8 ր., երրորդ 99 1/8 ր., ոսկին—7 ր. 71 կ.: Ռուսաց 1 բուբլ Լօնդօնի վրա արժէ 25 9/16 պէնս. ռուսաց 100 բուբլ Գերմանիայի վրա արժէ 217 մարկ, 75 պֆ., Փարիզի վրա 269 ֆրանկ:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մամուլի տակից դուրս են եկել և վաճառվում են Կենտրոնական Գրավաճառանոցում հետևեալ գրքերը:

Մանկական երգեր Գամառ-Քաթիպայի, կազմած	— ր.	25 կ.
— նոյնը անկազմ	— »	15 կ.
Թաւամազ մեղու՝ պատկերազարդ, կազմած Թարգ. օր Ն. Տէր-Մարկոսեանի	— »	40 կ.
Կարմիր լապտեր՝ պատկերազարդ և կազմած, Թարգ. օր Ն. Տէր-Մարկոսեանի	— »	50 կ.
— նոյնը առանց կազմի	— »	30 կ.
Վէպեր. Ե. Գրիգորեանցի	— »	60 կ.
Պէպօ. կոմեդիա երեք արարվածով, հեղ. Գ. Սունդուկեանի	— »	30 կ.
Մօրես կամ աշխատութիւն, հեղ. Տ. Գառ-օ-Թարգմ. Գաղիերէնից.	1 »	— կ.
Խորհրդաւոր կղզի, հեղ. Ժ. Վերն 3 հ. Թարգ. Գաղիերէնից	4 »	— կ.
Դիւաբնակ բլուր. հեղ. Էօժէն Սիւ 2 հ. Թարգ. Գաղիերէնից	2 »	75 կ.
Պատանեկան ներշնչումներ, հեղ. Հրանտ Ասատուրի	— »	60 կ.
Սահմանադրութիւն և Հայ ժողովուրդն Հր. Ասատուր	— »	35 կ.
Մի կաթիլ արտոսր, զոր կը հեղու. Սիսակ Հայ մխիթարին վրայ	— »	35 կ.
Խօսք զՀայրենեաց հեղ. Վ. Վ. Պարտիզակցի	— »	70 կ.
Թորոս աղբար Հայաստանի ճամբորդ հեղ. Սրուանձտեանց	1 »	25 կ.
Մանանայ նոր հեղինակի	1 »	75 կ.
Սիրաք և Սամուէլ բարի հօր կրթական դասեր, հեղ. Խրիմեան Հայրիկ	1 »	45 կ.
Մարգարիտ արքայութեան երկնից, նոյն հեղ.	— »	75 կ.
Վանդոյժ. կուժ մի ջուր իւր այրած Հայրենեաց վերայ կ'սրսկէ Խրիմեան Հայրիկ	— »	20 կ.
Թէ ինչ շահեցանք Բերլինի վեհաժողովէն, հեղ. Մ. Զերազի	— »	40 կ.
Հայաստան և Իտալիայ նոյն հեղ.	— »	60 կ.
Սամուէլ Մուրատեանի կտակի խնդիրը, դասախօսութիւն Ս. Արծրունու.	— »	50 կ.
Հրատարակութիւն Զարմայր Մսերեանի		
Փարոս Հայաստանի, պատկերազարդ հանդէս.	1 »	— կ.
Եղբայր և քոյր Գերմանական վէպ. պատկերազարդ	— »	30 կ.
Արքայադուստր Գերմանական վէպ. պատկերազարդ	— »	35 կ.
Հսկայական ձեռքեր Անգղիական վէպ, պատկերազարդ	— »	10 կ.
Իշխան Բէհբութեանի հրատարակութիւններ		
Վոյքի իմ վեչէր, Ֆարս երեք պատկերով Մ. Տ. Գ.	— »	40 կ.
Բեքեր բիձու Հանաքը. Օպերետա մի գործողութեամբ	— »	25 կ.
Աշնանային երեկոյ գիւղում, վոդեվիլ մէկ արարուածով.	— »	25 կ.
Բռնի ամուսնութիւն. կոմեդիայ մէկ արարուածով	— »	40 կ.
Ժանօ և Ժանէտ, օպերա-վոդեվիլ, մէկ գործողութեամբ.	— »	40 կ.
Պառաւներին խրատ. վոդեվիլ մէկ արարվածով Մ. Տ. Գ.	— »	50 կ.
Տիկինը նրան սպասում է, կատակերգութիւն մէկ արարուածով.	— »	30 կ.
Անանուն կատակ. կատակերգութիւն մէկ արարուածով.	— »	40 կ.
Փակուած դրան մօտ. պատկերամենախօսութիւն	— »	30 կ.

Նոյն տեղը վաճառվում են ամենայն տեսակ դասագրքեր Հայերէն, Ռուսերէն և օտար լեզուների, դասական պիտոյքներ ուսումնարանների և աշակերտների համար. Հայերէն, Ռուսերէն և Գաղիերէն վիպասանութիւններ, ամենայն հասակի ընթերցանութեան և գիտութեան զանազան ճիւղերին վերաբերեալ գրքեր. պատուէրները կատարվում են ամենայն արագութեամբ: Օտարաքաղաքացիք իրանց պահանջները պէտք է ուղարկեն հետևեալ հասցէով Въ Тифлисъ. Въ Центральную книжную торговлю"

2—10

Կիրակի, յունվարի 27-ից սկսած, Գունիբեան փողոցի վրա, ցիրկի մօտ գտնված բալագանի մէջ կը ներկայացնվի հասարակութեանը երբէք այստեղ չը տեսնված երևոյթ, այն է ԵՒՐՈՊԱՅԻ ԱՌԱՋԻՆ ՀՍԿԱՅ ՕՐԻՈՐԴ ԱՄԱԼԻԱ և աշխարհի ամենափոքր ԿԱՐԼԻԿՆԵՐ ՄԱՐԿԻՈՍ ՀԵՆՐԻԽ ՎՕԼԳԻՆ և ՄԱՐԿԻՈՍՈՒՀԻ ԼՈՒԻՋԸ: Տեղերի գները՝ առաջին տեղեր 50 կոպէկ, երկրորդ 30 կոպէկ: Երեխաները կէսն են վճարում:

3—5

Ռ. Ժիլկ Ռ. Նաւասարդեանի «Դիֆտերիտ» կամ «փողացաւ» գրքոյկը վաճառվում է հեղինակի մօտ քաղաքային հիւանդանոցում, Կենդրոնական գրավաճառանոցում և Օ. Գրիգորեանցի Կովկասեան գրավաճառանոցում: Գինն է 25 կոպէկ—բարեգործական նպատակով:

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՀԵՍՏԱՒՈՐՆԵՐԻ ԿԼՈՒԲԻ գլխաւոր անդամների խորհուրդը ի նկատի ունենալով յունվարի 26-ին նշանակված առաջին ընդհանուր ժողովի ՉՐ ԿԱՑԱՆԱԼԸ, կլուբի կանոնադրութեան 12 յօդուածի համեմատ հրաւիրում է կլուբի անդամներին ՀԱՒԱՔՎԵԼ փետրվարի 2-ին, ԵՐԵԿՈՑԵԱՆ ժամի 7-ին:

2 2

ՄԻ ՕՐԻՈՐԴ ՎԱՐԺՈՒՀԻ, որ ուսուցչուհու ՎԿԱՅԱԿԱՆ ունի, ՆՈՐ է եկել ՓԱՐԻԶԻՑ և հիմնաւորապէս իմանում է ՌՈՒՍԵՐԷՆ, ՖՐԱՆՍԻԵՐԷՆ, ԳԵՐՄԱՆԵՐԷՆ, ԱՆԳԼԻԵՐԷՆ և ԻՏԱԼԵՐԷՆ լեզուները, նոյնպէս ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ և ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆ. փնտռում է ԴԱՍԵՐ կամ վարժուհու ՊԱՇՏՕՆ: Հասցէն. Առամանսկայա փողոց, ԶՈՒԲԱԼՕՎԻ ՏՈՒՆ, առաջին յարկում Սեմինարիայի հանդէպ, Բրօդսկու ընակարանում:

3—6

ՆԵՐԱՅ 1880 ԹՒՈՒՄ ԿԸ ՏՊԱԳՐՎԻ

„ԿԱՅԾԵՐ"

ՎԷՊ ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԿԵԱՆՔԻՑ

Հեղինակութիւն ՐԱՖՖԻ

Վէպը բաղկացած կը լինի երկու առանձին հատորների, իւրաքանչիւրը կը բովանդակէ մօտաւորապէս 400 տպագրված երեսներ: Ամեն մէկ հատորի գինն է 1 ր. 50 կ., իսկ միասին 3 ր. Մէկ հատորի համար առանձին ստորագրութիւն չէ ընդունվում:

Ստորագրվել կարելի է՝ ԳԱՒԱՌՆԵՐՈՒՄ այն պարոններից, որոնք բարեհաճել են բաժանորդներ հաւաքել «ԿԱՅԾԵՐԻ» տպագրութեան համար, իսկ ԹԻՖԼԻՍՈՒՄ պէտք է դիմել «Մշակի» խմբագրատանը Յ. ՄԻՔԱԷԼ-ՅԱԿՈՐԵԱՆԻՆ:

ՄԻ ՀԱՅ ՕՐԻՈՐԴ, որ աւարտել է իւր ուսումն Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ օրիորդաց ԳԻՄՆԱԶԻԱՆԵՐԻՑ մէնի մէջ, ցանկանում է վարժուհու պաշտօն ստանալ Կովկասի ՀԱՅՈՑ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐՈՒՄ: Պայմանները խնդրում ուղարկել հետևեալ հասցէին. С. Петербургъ, Новая улица, домъ № 14 кв. № 10 Хр. Ив, Іоану.

2—5

ՄՕԶԴՕՔԻ

Օրիորդաց դպրոցի համար պահանջվում է մի ՎԱՐԺՈՒՀԻ շահաւոր պայմաններով. ցանկացողները կարող են դիմել «ՄՇԱԿԻ» խմբագրատունը Յ. Մէլիք-Յակոբեանին պայմանների մասին խօսելու համար:

ԱՐԴԵՆ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

1880

ՓՈՔՐԱԴԻՐ ՕՐԱՑՈՑՑ Ն. Թ. Ք.

Սկզբումն գեղաքանդակ պատկերք՝ Պատրիարքին Հայոց Կ. Պոլսոյ

Տ. ՆԵՐՍԷՍԻ

Եւ Քարտուղարին պատգամ. Հայոց 'ի Բերլին՝

ՄԻՆԱՍԱՑ ՁԵՐԱԶ

Վերջումն սպիտակ երեսքյիշատակարանի համար: Գինն է ամենայն տեղ 15 կոպ.

Բ. մեծադիր

ՕՐԱՑՈՑՑ

1880 Ն. Թ. Ք.

Սկզբումն գեղաքանդակ պատկեր՝

ՍՐԲՈՑՆ ՏՐԴԱՏԱՑ

Բոլոր Օր հ.՝ Հր ց.՝ մկ.՝ և Հմբ. գրուած են կարգաւ և ԾԱՂԻԿ ԸՆՏԱՆԵԱՑ

Ե. Տ. յաւելուածով

Սկզբումն գեղեցիկ պատկեր՝

ԴԻՏԱԿԱՒՈՐ ՁԿԱՆ

Գինն է մինչև 600 վ. . . 30 կ.

Իսկ նորանից բարձր՝ . . . . 35 կ.

Դումարով գնողաց զիջումն կը լինի:

Ա. Գուլամիրեանց

ՑԵՐԵԻԱՆ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ հրաւիրում է ցանկացողներին պատրաստել սօճու և կաղնու տախտակներ և ռէյկաներ, քարեր. Մցխէթի, Ալգէթի և Սօլօլակի քարաձուխի ձիւթ և աւազ:

Պատրաստելու պայմանների նոյնպէս պահանջված առարկաների քանակութեան և չափի մասին կարելի է տեղեկանալ վարչութեան մէջ առաւօտեան 10 ժամից մինչև 2 ամենայն օր: Թէ գրաւոր և թէ բերանացի առաջարկութիւնները ընդունվում են վարչութեան մէջ մինչև փետրվարի 7-ը:

2—3

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ՝

1. Երգնկեանց քահանայ—Մանկական երգարան, երգեր և պար-երգեր ընդունված է Ներսիսեան և Գայանեան դպրոցներում. գինն է . . — ր. 20 կ.
2. Մեծատուն եանց—Երգարան աղջկանց և աշակերտուհեաց Հայկական ուսումնարանաց . . . . . 1 ր. — կ.
3. Բժիշկ Բ. Նաւասարդեանց—Դիֆտերիտ բողազաւ . . — ր. 25 կ.
4. Բժիշկ. Գ. Տէր-Գրիգորեանց—Վարակիչ հիւանդութիւններ.

(Ծաղիկ, կարմրուկ, սկարլատին, բծաւորտիֆ, անդրադարձ տենդ, դիֆտերիտ, ընդհատ տենդ, խոլերայ, դեղին տենդ, որովայնատիֆ և ժանտախտ.)

Սոցա յատկութիւններն, ծագման և տարածման եղանակներն և նախապաշտպանական միջոցներ:

—

Վաճառվում են Զ. Գրիգորեանցի Կովկասեան գրավաճառանոցում:

3—5

Զ. Գրիգորեանցի «Կովկասեան գրավաճառանոցում ծախվում են՝

1. Գալֆայեան. Ա—բառգիրք Հայ-գաղղիարէն: Dictionnaire Arménien Français գինն է. . . . . 6 ր.
2. Գալֆայեան. Ա—Հայկական գեղագրութիւն, գինն է . . . . 1 ր.
3. Մեծատունեանց (Եղիշէ վարժապետ—Երգարան աղջկանց և աշակերտուհեաց Հայկական ուսումնարանաց: Հատ. գինն է. . . . . 1 ր.

2—3

ՓԱՐՈՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Վերնագրով վեցամեայ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ հանդիսի 1880 ամի առաջին տետրն տպագրուեցաւ և այս օրերումս կուղարկուի պատուելի բաժանորդաց: Այս տետրիս մէջ տպագրուած կան 36 ՊԱՏԿԵՐ, յորոց 12-ն ԱՌԱՋԻՆ ԵՆ: ԲԱԺԱՆՈՐԴՈՒԹԵԱՆ 1880 ամի երկու տետրակաց գինն է 2 ռուբլի. իսկ առանձին առանձին գնողների համար՝ իւրաքանչիւր տետրի գինն է 1 ր. 50 կ. հանդերձ առաքմամբ:

Հրատարակիչ Զարմայր Մսերեանց:

2—4

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ յայտնում է, որ ՌՈՒՍԱՑ ԲԱԶԱՐԻ և ՀԱՒԼԱԲԱՐԻ ՀՐԱՊԱՐԱԿԻ վրա կառուցված են ԱՌԵՏՐԱԿԱՆ ՇԻՆՈՒԹԻՒՆՆԵՐ վարձով տալու համար. ռուսաց բազարի վրա 18 համարների և Հաւլաբարի հրապարակի վրա 40: Ցիշեալ շինութիւնները ՎԱՐՁՈՎ վերցնել ՑԱՆԿԱՑՈՂՆԵՐԸ հրաւիրվում են քաղաքային վարչութիւնը, որի ԳՐԱՍԵՆԵԱԿՈՒՄ ամենայն օրբացի տօն օրերից, առաւօտեան 10 մինչև 2 ժամը երեկոյեան վարձի ՊԱՅՄԱՆՆԵՐԸ կը յայտնվին:

2—3

Дозволено Цензурою 4 Февраля 1880 г. Тифлисъ. Տպարան Ա. Ա. Միխելսոնի Типографія А. А. Михельсона